**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-23/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **21 դեկտեմբերի 2022թ.**

2022թ-ի դեկտեմբերի 16-21-ը ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ անվտանգության ապահովման (պահնորդական) ծառայությունների ձեռքբերման ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Վրթանեսյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի փոխտնօրեն, |
| Հ. Արչունց՝ | ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի աշխատակազմի ղեկավար, |
| Թ. Զաքարյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Վրթանեսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի գնումների մասնագետ Հ. Գուլաբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու, հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ կիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2022թ-ի դեկտեմբերի 16-ին, ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի շենքում ժամը 15:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Անվտանգության ապահովման (պահնորդական) ծառայություններ | 5000000 | 2022-12-19 15:30:00 | 3834000 |

ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ իրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացած տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՍԾՏԻԿ-ԷԱՃԾՁԲ-23/1 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «Լիոն Սեքյուրիթի Սերվիս» ՍՊԸ | ՀՀ 1Փ 12 Դարբնիկ 0809 Դարբնիկ Արարատ, +37499555587 | 0099555587@mail.ru | 00484087 |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման ենթակա հայտեր առկա չեն:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/ հ | Ներկայացված հայտեր | Նախահաշ վային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավի ճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | «Լիոն Սեքուրիթի Սերվիս» ՍՊԸ | 3834000 | 500000 | 20 % | 6000000 | 4950000 | 20 % | 5940000 | Նախահաշ վային գնի գերազանց ում |

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը.

2. Հաշվի առնելով, որ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել մեկ մասնակից, որի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման հայտով սահմանված գնման առարկայի ձեռքբերման գնման գինը, ինչի արդյունքում նշյալ մասնակցի հայտը համակարգի միջոցով չի ներառվել գնահատման մեջ՝ գնահատում չկատարել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են նախահաշվային գինը, որի արդյունքում՝ համակարգը մերժել է մասնակցի կողմից ներկայացված հայտը, Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետերով սահմանված պահանջները:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Վրթանեսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Հ. Արչունց ____________

Թ. Զաքարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան ____________